

**«ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ «ՓՈՐՁԱԳԵՏԻ
ԿԱՐԾԻՔԸ»՝ ՈՐՊԵՍ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ. ԻՐԱՎԱԿԻՐԱՌ-
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ֆրանգյան Վ.Ռ.

Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան

Հոդվածը նվիրված է տեսահրավական և գործնական ասպեկտների համալիր հետազոտության այնպիսի տեսակների ապացույցներին, ինչպիսիք են «փորձագետի եզրակացությունը» և «փորձագետի կարծիքը» Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Գործող քրեադատավարական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի վերլուծության հիման վրա դիտարկվում են նշված ապացույցների իրավական կարգավորման առանձնահատկությունները, դրանց դատավարական բնույթը, բովանդակությունը և նշանակությունը ապացուցման մեխանիզմում:

Հատուկ ուշադրություն է դարձվում փորձագետի եզրակացության և փորձագետի կարծիքի միջև սահմանազատմանը, դրանց ապացուցողական կարգավիճակի որոշմանը, ինչպես նաև նախաքննության և դատական քննության փուլերում դրանց գնահատման ու օգտագործման ժամանակ իրավական պարիտետի (հավասարության) ապահովման հիմնախնդիրներին: Հետազոտվում են փորձագիտական հետևությունների ստուգման, վիճարկման և գնահատման դատավարական (մեխանիզմները) կառուցակարգերը, ինչպես նաև այդ ապացույցների ազդեցությունը քրեական դատավարության մասնակիցների ներքին համոզմունքի ձևավորման և դատավարական որոշումների կայացման վրա:

Աշխատանքում վեր են հանվում իրավակիրառ պրակտիկայում առկա հիմնախնդիրները՝ կապված փորձագետի եզրակացության և կարծիքի կիրառումը կարգավորող առանձին օրենսդրական դրույթների տարաբնույթ մեկնաբանությունների հետ, և հիմնավորվում է համապատասխան դատավարական կառուցակարգերի հետագա կատարելագործման անհրաժեշտությունը: Եզրակացություն է արվում այն մասին, որ ապացույցների այս տեսակների գնահատման նկատմամբ միասնական մոտեցման ապահովումը հանդիսանում է

Թղթակցական հասցեն՝ Ֆրանգյան Վարդգես Ռուբիկի, պայթյունատեխնիկական, պայթյունատեխնոլոգիական և հրդեհատեխնիկական փորձաքննությունների բաժնի փորձագետ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, email: frangyanvardges@gmail.com

մրցակցության, կողմերի իրավահավասարության և արդար դատաքննության սկզբունքների իրացման կարևոր երաշխիք:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել իրավակիրառ գործունեության, դատափորձագիտական պրակտիկայի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության կատարելագործման գործընթացում:

Բանալի բառեր. փորձագետի եզրակացություն, փորձագետի կարծիք, քրեական դատավարություն, ապացույցներ, ապացույցների գնահատում, դատական փորձաքննություն, կողմերի մրցակցություն, արդար դատաքննություն, քրեադատավարական իրավունք:

«Փորձագետի եզրակացություն»ը և «փորձագետի կարծիք»ը, լինելով իրավակիրառման համակարգի կարևոր գործիքներ, հիմնարար դեր են կատարում արդարադատության գործընթացում՝ ապահովելով դատարանի կամ քննչական մարմնի համար փաստերի և հանգամանքների շուրջ հիմնավորված, գիտականորեն հավաստի տեղեկություններ: Հայաստանի Հանրապետության, նաև այլ երկրների իրավական համակարգերում փորձագետի կողմից կազմված այս փաստաթղթերը տարբեր ապացուցողական ուժ և կիրառական դաշտ են ենթադրում:

Վարույթ իրականացնող մարմինը և դատարանը հաճախ դիմում են փորձագիտական եզրակացություններին, երբ անհրաժեշտ են լինում մասնագիտական գիտելիքներ, որոնք դուրս են դատարանի կամ դատավարության այլ մասնակիցների իրավասություններից: Այդ ճանապարհով հնարավոր է լինում բացահայտել հանգամանքներ, որոնք այլ եղանակներով դժվար կամ անհնար է ստանալը:

Գրականության վերլուծությունը նպատակ ունի բացահայտել փորձագետի եզրակացության և կարծիքի միջև իրավական և գործնական տարբերությունները, ինչպես նաև ուսումնասիրել դրանց պատմական և իրավական զարգացումը: Արդյունքում այս ուսումնասիրությունը կարող է նպաստել փորձագետի ինստիտուտի դերի ավելի խորը ընկալմանը արդարադատության համակարգում, ինչպես նաև ոլորտի զարգացման և բարեփոխումների համար հիմք հանդիսացող կիրառական առաջարկների մշակմանը:

Հարկ է նշել, որ վերը նշված թեման պատմական խորություն ունի. դեռևս 12-րդ դարում Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերում հանդիպում են փորձագետի եզրակացություն և ցուցմունք տերմինները, որոնք օգտագործվում էին դատական ապացույցների քննարկման շրջանակներում [1]:

Փորձաքննությունը գիտական հետազոտության ձև է, որը քրեական դատավարության ընթացքում օգտագործվում է հատուկ գիտելիքների կիրառմամբ՝ գործի համար կարևոր հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալներ տրամադրելու նպատակով: Փորձագետները ապացույցները դիտարկելիս կիրառում են

հատուկ գիտելիքներ, ինչն էլ հնարավորություն է տալիս կազմել հիմնավորված փորձագիտական կարծիք կամ փորձագետի եզրակացություն: Չնայած այն հանգամանքին, որ կարծիքը և եզրակացությունը տարբեր իրավական տերմիններ են, սակայն պետք է ընդունել, որ երկուսն էլ կարևոր են իրենց գործածության շրջանակներում:

Գևորգ Մալխասյանը, (անդրադառնալով նախկին Քրեական դատավարության օրենսգրքին [2]) իր «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ աշխատության մեջ նշում է, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն մասնագետը միայն օժանդակություն է ցուցաբերում: Նա իրավասու չէ որևէ ակտ՝ փաստաթուղթ կազմել: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն մասնագետի հայտնած կարծիքը չի փոխարինվում փորձագետի եզրակացությամբ: Որից կարելի է հանգել այն եզրակացությանը, որ գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի ոլորտներում ապացույց կարող է համարվել միայն «փորձագետի եզրակացություն»-ը: Այս կապակցությամբ գտնում են, որ չի կարելի մասնագետի կարգավիճակը հավասարացնել փորձագետի կարգավիճակին» [3]:

Ինգա Ավագյանը նշում է՝ «Մասնագետի կարծիքը չի դիտվում որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, և չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը: Այն վարույթն իրականացնող մարմնի համար կարող է ունենալ ուղղորդող, խորհրդատվական նշանակություն», և հավելում, որ՝ «Քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների պարագայում մասնագետի կարծիքը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը» [4]:

Ըստ Վահե Ենգիբարյանի փորձագետի հետազոտության ընթացքն ու արդյունքներն ամրագրվում են «փորձագետի եզրակացության» մեջ, և անշուշտ իրավակարգավորումների պարագայում «մասնագետի կարծիք»-ը չի կարող փոխարինել «փորձագետի եզրակացության»-ը [5]:

«Փորձագետի եզրակացություն»-ը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառներում բավարար հատուկ գիտելիքների կամ հմտությունների կիրառմամբ կազմված գրավոր հիմնավորված հետևությունների ամբողջություն է, որն արտացոլում է վարույթն իրականացնող մարմնի կամ վարույթի մասնավոր մասնակցի կողմից առաջադրված հարցերին տրված պատասխանները: Այս եզրակացությանը փորձագետը հանգում է՝ ուսումնասիրելով վարույթին առնչվող նյութերը, դիակը կամ համապատասխան այլ իր [6]:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանական գործնական ուղեցույցում սահմանված են կարծիքի առանձնահատկությունները և ընդգծվում են, որ «փորձագետի կարծիք»-ը, ի տարբերություն «փորձագետի եզրակացության», ունի սահմանափակ կիրառելիություն և ապացուցողական ուժ [7]:

Տրեուշնիկովի ուսումնասիրության համաձայն՝ փորձագետի (փորձագետների) եզրակացությունը որպես ապացույց ձևավորվում է դատարանի (դատավորի) որոշմամբ իրականացված փորձագետի հետազոտության արդյունքում՝ որոշակի փաստական հանգամանքների վերաբերյալ: Այն կատարվում է գիտության, արվեստի, տեխնիկայի կամ արհեստի ոլորտում հատուկ գիտելիքներ ունեցող անձանց կողմից [8]:

Տրեուշնիկովի վերլուծությամբ՝ փորձագետի եզրակացությունը կարելի է բաժանել տարբեր տեսակների՝ կախված հարցերի բնույթից և տեղեկատվական ամբողջականությունից.

1. Կատեգորիկ եզրակացություն. հստակ, դրական կամ բացասական եզրակացություն,

2. Համեմատական եզրակացություն. տվյալների համեմատության հիման վրա տրված գնահատական,

3. Հարցին պատասխանելու անհնարինության վերաբերյալ եզրակացություն. եզրակացություն, որը հիմնված է այն փաստի վրա, որ ներկայացված տվյալներով անհնար է պատասխանել հարցին:

Այս դասակարգումը կարևոր է դատավարական գործընթացում փորձագետի եզրակացության տարբեր կիրառական ձևերի և դրանց ապացուցողական արժեքի լիարժեք ընկալման համար:

Փորձագետի եզրակացության արժանահավատությունը հիմնված է այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք կարող են օգնել դատարանին որոշելու, թե ինչպիսի ապացույցներ են կիրառելի գործի քննության համար:

Այս համատեքստում Daubert Standard-ը համարվում է կարևոր նախադեպային մոտեցում, որը ամրապնդում է դատարանում ներկայացվող գիտական ապացույցների հիմնավորվածության և հուսալիության ապահովման անհրաժեշտությունը՝ նախատեսելով դրանց գիտական հիմքերի ստուգման հստակ չափանիշներ:

1993 թ. «Daubert v. Merrell Dow Pharmaceuticals, Inc.» գործով «United States Supreme Court»-ը ձևավորեց չափանիշների համակարգ, որի նպատակն է ապահովել, որ դատարան ներկայացվող գիտական ապացույցները համապատասխանեն գիտական վավերականության և մեթոդաբանական հուսալիության պահանջներին:

Դոբերտի ստանդարտը (Daubert Standard) սահմանում է մի շարք հիմնական չափանիշներ, այդ թվում՝ մեթոդի ստուգելիությունը, գիտական հանրության կողմից ընդունելիությունը, սխալի հավանականության գնահատումը, ինչպես նաև գիտական հրապարակումների և գործընկերային վերանայման առկայությունը [9]:

Դոբերտի ստանդարտի հիմնական չափանիշներն են.

1. Փորձաքննության մեթոդի ստուգելիություն. մեթոդը պետք է ենթակա լինի փորձարարական ստուգման և հնարավորություն տա դրա արդյունքների վերահաստատմանը այլ հետազոտողների կողմից:

2. Հրապարակվածություն և գործընկերային վերանայում. գիտական մեթոդները և եզրակացությունները պետք է հրապարակված լինեն մասնագիտական գիտական աղբյուրներում և անցած լինեն անկախ գիտական գնահատման գործընթաց:

3. Սխալի հավանականության մակարդակ. անհրաժեշտ է գնահատել և քանակապես արտահայտել մեթոդի կիրառման հնարավոր սխալի աստիճանը:

4. Ստանդարտների առկայություն և պահպանում. փորձագիտական մեթոդների կիրառման համար պետք է առկա լինեն հստակ սահմանված և կիրառվող մեթոդաբանական և գործառնական ստանդարտներ:

5. Գիտական հանրության կողմից ընդհանուր ընդունելիություն. մեթոդը պետք է լայնորեն ընդունված լինի համապատասխան գիտական ոլորտում որպես հուսալի և վավերական մոտեցում:

Հայաստանի Հանրապետությունում փորձագետի եզրակացության վերաբերյալ չկա ընդունված ստանդարտ, որն իր հերթին կարող է հանգեցնել փորձագիտական հաստատության կողմից ինքնուրույն մեթոդների և ձևերի մշակմանը: Առանց ընդունված մեկ միասնական ստանդարտի, դատավորի կողմից դժվար կլինի նշված մեթոդների հավաստիությունը ստուգելը, թվարկել մեթոդները, ինչն էլ իր հերթին կարող է բերել փորձագետի եզրակացության արժանահավատության նվազման:

Ըստ Ուկրաինայի քրեական օրենսգրքի՝ փորձագետի եզրակացությունը փորձագետի կատարած հետազոտության և դրանց արդյունքներից ստացված եզրահանգումների նկարագրությունն է, փորձագետին հանձնարարած անձի կամ հետաքննիչ դատավորի կամ փորձաքննությունը նախաձեռնած դատարանի կողմից առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները: Եզրակացությունը պետք է հիմնված լինի այն տեղեկատվության վրա, որը փորձագետն ուղղակիորեն ընկալել է կամ նրան հայտնի է դարձել ուսումնասիրության համար տրամադրված նյութերի ուսումնասիրության ընթացքում: Փորձագետն իր անունից տալիս է եզրակացություն և դրա համար կրում է անձնական պատասխանատվություն [10]:

Ռուս իրավաբան Սիդոր Չեռնենկոն նշում է՝ «Փորձագետի եզրակացությունը փաստաթուղթ է, որը պարունակում է փորձագետի կարծիք ցանկացած բնագավառում հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի վերաբերյալ, փորձագետի եզրակացության արժեքը շատ ավելի բարձր է, այն փորձագետի միանշանակ կարծիքն է՝ հիմնված հետազոտության վրա, և նշանակում է, որ այլ կերպ լինել չի կարող»: Ըստ Մ.Ս. Ստրոգովիչի «փորձագետի եզրակացությունը պետք է կատեգորիկ լինի: Եթե փորձագետը չի կարող կատեգորիկ եզրակացություն տալ, ապա նա պետք է տեղեկացնի փորձաքննություն նշանակած անձին եզրակացություն տալու անհնարինության մասին» [11]:

Ըստ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի՝ փորձագետի եզրակացությունը քրեական վարույթն իրականացնող անձի կամ կողմերի կողմից փորձագետին տրված

հարցերի վերաբերյալ գրավոր ներկայացված ուսումնասիրության բովանդակությունն ու եզրակացություններն են:

Հատկանշական է արձանագրել, որ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության մեջ բացակայում է «փորձագետի կարծիք» ինստիտուտը՝ որպես ինքնուրույն ապացույցի տեսակ, որն էական տարբերություն է ձևավորում ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի համեմատ [12]:

Ուսումնասիրելով Վրաստանի քրեական դատավարության օրենսգիրքը՝ նկատում ենք, որ այնտեղ ներկայացվում է միայն «փորձագետի եզրակացություն» տերմինը, որն ունի գրեթե նույն սահմանումը ինչպես գործող ՀՀ քրեական դատավարությունում է: Եվ բացի այդ, փորձագետը օգնում է կողմերին և դատարանին ապացույցների հայտնաբերման, հետազոտման գործում [13]: Այսինքն, կարող ենք նշել, որ Վրաստանի օրենսդրությունում «փորձագետի կարծիք» տերմինը չի առանձնացվում որպես առանձին իրավաբանական կատեգորիա:

Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգրքի 166-րդ հոդվածում սահմանվում է, որ փորձագետները պետք է կազմեն գրավոր եզրակացություն, որը պետք է պարունակի կատարված գործողությունների նկարագրությունը և դրանց արդյունքները: Եթե մի քանի փորձագետներ են նշանակվել և նրանց կարծիքները տարբերվում են, ապա յուրաքանչյուրն իր եզրակացության համար պետք է ներկայացնի փաստաթուղթ՝ դրանք հիմնավորելով: Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգրքում «փորձագետի կարծիք» տերմինը չի օգտագործվում: [14]:

«Joanna Briggs Institute»-ը (JBI), որը Ավստրալիայում հիմնադրված հետազոտական կազմակերպություն է «փորձագետի կարծիք»-ը սահմանում է որպես ձևավորված տեսակետ կամ դատողություն, որը կարող է չհիմնվել պաշտոնական ապացույցների վրա: Այն կարող է ներառել նաև փորձագետի խորհրդատվական հայտարարություններ՝ առողջապահական կամ այլ ոլորտների հարցերի վերաբերյալ:

Այսպիսով, գրականության վերլուծության բաժնում համակողմանիորեն ուսումնասիրվեցին «փորձագետի եզրակացության» և «փորձագետի կարծիք»-ի իրավական ու կառուցվածքային առանձնահատկությունները՝ հաշվի առնելով ազգային և միջազգային գիտական ու օրենսդրական աղբյուրները: Գրականության վերլուծությունն ընդգծեց նաև միջազգային փորձի կարևորությունը՝ համեմատության միջոցով բացահայտելով փորձագետի ինստիտուտի զարգացման հնարավոր ուղղություններն ու կիրառական առանձնահատկությունները: Նշենք նաև, որ վերլուծության արդյունքում պարզ դարձավ՝ շատ երկրների քրեական դատավարության օրենսդրություններում բացակայում է «փորձագետի կարծիք» տերմինը:

Ինչ վերաբերում է փորձագիտական ապացույցների տարատեսակներին, ապա օրենսդրությամբ տրված են դրանց հստակ սահմանումները:

Մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի վերլուծությամբ պարզ է դառնում, որ փորձագետի եզրակացությունը գիտության կամ տեխնիկայի, արվեստի կամ արհեստի կամ այլ բնագավառում հատուկ գիտելիքների ինչպես նաև հմտությունների օգտագործմամբ, վարույթն իրականացնող մարմնի կամ մասնավոր մասնակցի կողմից առաջադրված, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի վերաբերյալ գրավոր հիմնավորված հետևություններն են, որոնց փորձագետը հանգում է վարույթի համապատասխան նյութերը, դիակը կամ վարույթին ներգրավված համապատասխան անձին հետազոտելու արդյունքում:

Վերլուծելով վերոնշյալ հոդվածը՝ կարող ենք ասել, որ օրենքը պահանջում է որպեսզի փորձագետի կողմից տրված եզրակացությունը հիմնված լինի փորձագետի կողմից իրականացված հետազոտությունների վրա: Այսինքն փորձագետը որոշակի հետևությունների է հանգում՝ կատարելով մի շարք հետազոտություններ և օգտագործելով յուրաքանչյուր հետազոտության համար համապատասխան մեթոդներ ու մեթոդական մոտեցումներ:

Ի տարբերություն «փորձագետի եզրակացության», «փորձագետի կարծիք»-ն ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի՝ փորձագետի կատարած մասնագիտական հետազոտությունն է, որի արդյունքների հիման վրա ներկայացվում է գրավոր ձևով ամփոփված և հիմնավորված կարծիքը՝ առանց անմիջական առնչություն ունենալու դատավարական նյութերի կամ ուսումնասիրության առարկայի հետ ու բացառապես հիմնվելով ներկայացված հարցադրումների և մասնագիտական վերլուծության վրա:

Նույն Քրեական դատավարության օրենսգրքով փորձագետի «կարծիք» հասկացությունը վերլուծելով՝ պարզ է դառնում, որ փորձագետը կարծիք է հայտնում առանց որևէ հետազոտություն իրականացնելու, հիմնվելով սեփական փորձի գիտելիքների վրա, ինչը սակայն ենթադրում է, որ երբեմն այն կարող է չհամապատասխանել իրականությանը և տարբերվել նույն հարցի շուրջ հետազոտության արդյունքում տրված փորձագետի եզրակացությունից, որն իր հերթին կարող է բերել մի շարք խնդիրներ: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ փորձագետի կարծիք կարող է ստանալ ոչ թե վարույթ իրականացնող մարմինը, այլ՝ մասնավոր մասնակիցը:

Փորձագետի ինստիտուտը քրեական դատավարության գործառնության համար առանձնահատուկ դեր ունի, քանի որ փորձագետն այն օժանդակող մասնագետն է, ով վարույթն իրականացնող մարմնին և վարույթի մասնավոր մասնակիցներին հնարավորություն է ընձեռնում կիրառելով հատուկ գիտելիքներ՝ կատարել որոշակի փաստական հանգամանքների վերլուծություն և գնահատում: Գործող Քրեական դատավարության օրենսգիրքը հստակ ձևակերպում է ինչպես փորձագետի ներգրավման հիմքերը, այնպես էլ նրա գործառնությունները՝ կարևորելով

մասնագիտական չեզոքությունն ու իրավական գործընթացին օժանդակելու նպատակային բնույթը:

Քրեական դատավարության օրենսգիրքը հստակ սահմանում է «փորձագետ» հասկացությունը, սակայն պետք է նշենք, որ չի հստակեցնում գիտելիքների հատուկ չափորոշիչ՝ նշելով միայն «բավարար հատուկ գիտելիքներ» եզրույթը, ինչը ևս գործնականում կարող է մի շարք խնդիրներ առաջացնել փորձագետի գիտելիքների և որակավորումների հետ կապված հարցի վերաբերյալ:

Փորձագետի լիազորությունները քրեական վարույթում ընդգրկում են ինչպես իրավական, այնպես էլ մասնագիտական հստակեցված իրավունքներ ու պարտականություններ: Այս շրջանակում օրենսդիրը հավասարակշռում է փորձագետի ինքնուրույնությունը և նրա գործառույթների նկատմամբ վերահսկողության մեխանիզմները՝ ապահովելով գործընթացի մասնագիտական որակն ու իրավական անվտանգությունը: Քրեական դատավարության օրենսգիրքը հստակ կարգավորում է փորձագետի գործառույթների շրջանակը՝ սահմանելով նրա իրավունքների և պարտականությունների ամբողջական ցանկը, ինչն ամրագրված է Քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով:

Փորձագիտական ապացույցների տարատեսակները հստակ սահմանված են օրենսդրությամբ: Մասնավորապես, Քրեական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ փորձագետի եզրակացությունը հանդես է գալիս գրավոր ձևով ներկայացված մասնագիտական հիմնավորված դիտարկումների և հետևությունների համակցություն: Այդ եզրակացությունները ձևավորվում են՝ գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառներում հատուկ գիտելիքների և հմտությունների կիրառման արդյունքում, վարույթն իրականացնող մարմնի կամ մասնավոր մասնակցի կողմից առաջադրված հարցերի, ինչպես նաև՝ փորձագետի իրավասության մեջ մտնող այլ հարցերի ուսումնասիրության արդյունքում:

Փորձաքննության իրականացումն օրենսդրորեն խիստ կանոնակարգված գործընթաց է, որը ենթակա է ձևական և բովանդակային պահանջների կատարմանը՝ ապահովելու համար վարույթի օրինականությունն ու փորձագիտական միջամտության հիմնավորվածությունը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածը սահմանում է փորձաքննության նշանակման և կատարման իրավական հիմքերը, որի նպատակն է ապահովել փորձաքննության օրինականությունը, մասնագիտական հիմնավորվածությունը և արդյունքների կիրառելիությունը քրեական գործի քննության ընթացքում:

Փորձաքննության պատշաճ իրականացումը պայմանավորված է ոչ միայն դրա իրավական հիմքով, այլև հստակ կազմակերպչական ընթացակարգով: Համաձայն գործող Քրեական դատավարության օրենսգրքի 256-րդ հոդվածի, փորձաքննության կատարումը ենթադրում է մի շարք գործողությունների հաջորդականություն՝ սկսած

փորձագետի ընտրությունից մինչև գործընթացի վերահսկման և աջակցման մեխանիզմների ապահովումը: Այս դրույթները կոչված են երաշխավորելու փորձագիտական միջամտության մասնագիտական անկախությունն ու արդյունքների արժանահավատությունը:

Այսպիսով կարող ենք ասել, որ գործող Քրեական դատավարության օրենսգիրքը հստակ սահմանում է փորձագետի կողմից տրված եզրակացության կառուցվածքը, սակայն չի տրվում նույն օրենսգրքով սահմանված փորձագետի կողմից տրված գրավոր կարծիքի կառուցվածքը, ինչն իր հերթին ևս կարող է առաջացնել որոշակի տարածայնություններ, քանի որ փորձագետի կողմից տրվող գրավոր կարծիքի կառուցվածքը հստակ սահմանված չէ և յուրաքանչյուր փորձագետ կարող է կարծիք տրամադրել յուրովի ձևաչափով:

«Փորձագետի եզրակացության» և «Փորձագետի կարծիք»ի հետազոտումը քրեական դատավարության ընթացքում կարևոր փուլ է, որն ուղղված է այդ ապացույցների ամբողջական, հրապարակային և հավասարակշռված գնահատմանը:

Համաձայն գործող Քրեական դատավարության օրենսգրքի 332-րդ հոդվածի, «փորձագետի եզրակացություն»ն ու «փորձագետի կարծիք»ը հետազոտվում են դատարանում հրապարակման միջոցով՝ ապահովելով ինչպես կողմերի մասնակցության հնարավորությունը, այնպես էլ դատարանի փաստերի ամբողջական ընկալումը:

Քրեական դատավարության հին օրենսդրական կարգավորումները ձևավորել էին ապացույցների համակարգ, որն իր կառուցվածքով և իրավաչափության չափանիշներով որոշակի ընդհանրություններ ուներ ներկայիս կարգավորման հետ, սակայն միաժամանակ՝ այն ունի էական տարբերություններ՝ ինչպես ապացույցների տեսակների համակարգման, այնպես էլ դրանց իրավական բնութագրումների տեսանկյունից:

Օրենսգիրքում հատուկ շեշտադրված է, որ քրեական դատավարության ընթացքում թույլատրվում է օգտագործել միայն այն փաստական տվյալները, որոնք ձեռք են բերվել օրենքի պահանջներին համապատասխան: Փորձագիտական ապացույցները թե՛ գործող, թե՛ նախկին Քրեական դատավարության օրենսգրքերում կազմում են ինքնուրույն ապացուցողական ինստիտուտ: Նախկին Քրեական դատավարության Օրենսգրքի 114-րդ հոդվածի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը ձևավորվում էր գրավոր, հիմնավորված տեսքով՝ հատուկ գիտելիքների կիրառմամբ, այն չէր կարող փոխարինվել հարցաքննության արձանագրությամբ, նույնիսկ եթե փորձագետը հարցաքննվում էր իր եզրակացությունը պարզաբանելու նպատակով: Եզրակացության իրավական ուժը մնում էր անփոփոխ՝ անկախ հետագա բացատրություններից: Նախկին օրենսգրքի նպատակներից էր ապահովել փորձագիտական հետազոտության թափանցիկությունը, Փորձագետի մասնագիտական որակավորման վերահսկելիությունը, փաստերի հավաստի արձանագրումը և ձևակերպման համարժեքությունը: Այս դրույթները

մեծապես պահպանվել են նաև գործող օրենսգրքում՝ առավել ընդգծելով փորձագետի եզրակացության իրավական արժեքը որպես ապացուցողական փաստաթուղթ:

Այսպիսով հավասար գնահատողական բնույթ ունեցող երկու տարբեր ապացույցի տեսակներ առաջացնում են իրապես խնդիր՝ կապված ապացույցների հավաստիության սկզբունքի խաթարման, քննիչի կամ դատարանի՝ սուբյեկտիվորեն կանխորոշված գնահատականների վրա հիմնվելու և, ինչու չէ, նաև կոռուպցիոն ռիսկերի խորացման հետ: Չի բացառվում այնպիսի իրավիճակ, երբ նույն քրեական վարույթի շրջանակներում տրված փորձագետի եզրակացությունը և փորձագետի կարծիքը կարող են հակասել միմյանց: Սա լրջագույն խնդիր է առաջացնում ապացուցման գործընթացում, քանի որ ՀՀ գործող օրենսդրությամբ դրանք իրավաբանական իմաստով ունեն նույն ապացուցողական ուժը: Կարող է նաև նույն վարույթի շրջանակում կողմերի կողմից ներկայացվի հակասական փորձագետի կարծիքներ, բայց քանի որ չկա հստակ իրականացված հետազոտություն՝ հաստատված մեթոդիկայով, ուստի գնահատել տրված կարծիքներից ո՞րն է առավել արժանահավատ, բավականին բարդ է և դա կարող է բերել մի շարք խնդիրների: Օրենսդրությունը որևէ լուծում կամ կարգավորում չի նախատեսում նման դեպքերի համար, որը հանգեցնում է անորոշություն իրավական դաշտում:

Նման նորմատիվ բացի պայմաններում առաջանում է իրապես խնդիր՝ կապված ապացույցների հավաստիության սկզբունքի խաթարման, քննիչի կամ դատարանի՝ սուբյեկտիվորեն կանխորոշված գնահատականների վրա հիմնվելու: Այս առումով օրենսդրական բացը՝ կապված փորձագետի եզրակացության և կարծիքի գնահատման չափանիշների բացակայության հետ, կարող է հանգեցնել քննիչի կամ դատարանի անհիմն հայեցողության, որոշումների կողմնակալության, իրավական կամայականության դրսևորման: Սա ոչ միայն խաթարում է արդար դատաքննության հիմնական սկզբունքները, այլև հակասում է իրավական որոշակիության պահանջներին:

Քննիչը կամ դատարանը կարող են իրենց որոշումները հիմնավորել փորձագետի կարծիքի վրա, որն ըստ էության չունի նույն հավաստիության աստիճանը, ինչ փորձագետի եզրակացությունը: Նման իրավիճակում աճում է դատական սխալների հավանականությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատավճիռը կարող է կայացվել ապացուցման բավարարության պահանջներին չհամապատասխանող, սուբյեկտիվ և փորձագիտական վերլուծությամբ չհիմնավորված փաստաթղթի վրա:

Այսպիսով, «փորձագետի կարծիք»ի ներմուծումը որպես ինքնուրույն ապացույցի տեսակ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում, մի կողմից, կարող է ընդլայնել մասնագիտական մասնակցության հնարավորությունները, սակայն մյուս կողմից՝ այն խախտում է ապացույցների գնահատման սկզբունքը: Փորձագետի «կարծիք»ն, ի տարբերություն «փորձագետի եզրակացության», չի հիմնվում խորքային փորձագիտական հետազոտության արդյունքների վրա և կարելի է հետևություն անել, որ այն չունի հավաստիության նույն մակարդակը:

Իրավական նման անհավասարակշռությունը հանգեցնում է ապացուցողական համակարգի թուլացման, դատական սխալների աճի, և այնպիսի իրավական միջավայրի ձևավորման, որտեղ հնարավոր է ապացուցման գործընթացը հիմնավորել ոչ թե օբյեկտիվ հետազոտությամբ, այլ սուբյեկտիվ կարծիքի վրա: Այս ամենը հակասում է ոչ միայն ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված արդար դատաքննության սկզբունքին, այլև միջազգային իրավունքի շրջանակում ճանաչված իրավական որոշակիության և արդար գործընթացի չափանիշներին:

Կարծում եմ այս համատեքստում ողջամիտ և առարկայական լուծում կլինեն նոր ապացույց նախատեսելու փոխարեն փորձագետին իրավունք վերապահել հանձնաժողովային փորձաքննությունների ընթացքում տարակարծության դեպքում հանդես գալ անհատական կարծիքով, որը կրկին հիմնված կլինեն փորձագետի մեթոդաբանական կամ կուտակված փորձի առանձնահատկությունների հիման վրա, ինչպես դատական համակարգում երբեմն վերաքննության դատական ակտերի վիճարկման ընթացքում դատավորին իրավունք է վերապահվել արտահայտելու հատուկ կարծիք:

Ինչպես պարզ դարձավ հետազոտության արդյունքում՝ համեմատական և իրավական վերլուծությամբ, ՀՀ օրենսդրության առանձին դրույթներում առկա են անհամապատասխանություններ միջազգային իրավական ստանդարտների և լավագույն պրակտիկայի միջև:

Վերլուծելով «փորձագետի կարծիք» և «փորձագետի եզրակացություն» տերմինների կիրառման ընթացակարգերն ու իրավական նշանակությունը՝ գալիս ենք այն եզրահանգման, որ նշված հասկացությունները չունեն նույն կարգի իրավական դիրք և գործնական կիրառելիություն: Մասնավորապես, «փորձագետի եզրակացություն»ը, որը ձևավորվում է համապատասխան մասնագիտական ուսումնասիրությունների, վերլուծությունների և հետազոտությունների արդյունքում, պետք է համարվի առավել հավաստի և օբյեկտիվ ապացույցի տեսակ:

Հակադարձելով «փորձագետի եզրակացություն» տերմին հասկացությանը, նշենք, որ «փորձագետի կարծիք»ը պետք է դասակարգել պակաս պաշտոնական ապացույցի տեսակ: «Փորձագետի կարծիք»ը վարույթի որոշակի հարցերի վերաբերյալ վերջինիս անձնական դիրքորոշման արտահայտչաձևն է՝ հիմնված գիտելիքների և փորձի վրա, ուստի կարծում ենք այն խիստ սուբյեկտիվ է, սահմանափակված խնդրո առարկայի ամբողջական ուսումնասիրվածությունից, այլ կերպ՝ փորձագետը կաշկանդված է տեղեկատվական ծավալով: «Փորձագետի կարծիք»-ը չի պահանջում ձևաչափման չափանիշների խիստ պահպանում, պարզ չէ նաև վերջինիս դատավարական ամրագրման ձևը, ուստի այդ տեսանկյունից՝ թերի է:

Ի տարբերություն «փորձագետի եզրակացության», «փորձագետի կարծիք»ը ստացվում է միայն վարույթի մասնավոր մասնակիցների նախաձեռնությամբ և նրանց կողմից առաջադրած հարցերի շրջանակներում: «Փորձագետի կարծիք»ը կարող է

չունենալ ամբողջական հիմնավորում և հստակ փաստարկվածություն: Այս հանգամանքը կարող է հանգեցնել իրավական գործընթացներում անորոշությունների կամ սուբյեկտիվ մոտեցումների, ինչը հակասում է իրավունքի որոշակիության և կանխատեսելիության սկզբունքներին:

Կարծում ենք, որ «փորձագետի կարծիք»ի և «փորձագետի եզրակացություն» հակասությունների պայմաններում վարույթն իրականացնող մարմինը պարտավորվելու է քննությամբ առաջացած հակասությունների պարզաբանման նպատակով նշանակել լրացուցիչ փորձաքննություն, ինչը կրեթի վարության գործողությունների ձգձգման, նախաքննության ուղենիշի անորոշության, կարող է դառնալ դատավարական միջոցների և ռեսուրսների անհիմն վատնման պատճառ, և բացի այդ, դիտարկում ենք նաև այս ապացույցի գոյությամբ հետագայում վարույթի մասնավոր մասնակիցների կողմից անհիմն միջնորդությունների տեսքով իրավունքի չարաշահման հնարավոր ռիսկեր:

Գտնում ենք որ նպատակահարմար է իրավական ակտերում, մասնավորապես՝ փորձագիտական գործունեությանն առնչվող դրույթներում, ընդգծված կերպով նշել և ամրապնդել «փորձագետի եզրակացություն» տերմինի կիրառման առաջնայնությունը, իսկ պակաս ապացուցողական նշանակություն տալ փորձագետի կարծիքին:

Իհարկե հասկանալի է նաև օրենսդրի կամքը, քանի որ այս կերպ, կարծում ենք, բարձրացվել է փորձագետի քրեադատավարական դերը՝ կարևորելով նրա սուբյեկտիվ մոտեցումը. սակայն այս պայմաններում բնավ «սուբյեկտիվացումը» չի բխում քննության շահերից:

Վերոշարադրյալի պայմաններում գտնում ենք, որ անհրաժեշտ է վերանայել «փորձագետի կարծիք» տերմինի կիրառման իրավաչափությունն ու անհրաժեշտությունը՝ սահմանելով դրա օգտագործման հստակ շրջանակներ, որպես երկրորդային կամ օժանդակ բնույթի տեղեկատվություն, միևնույն ժամանակ առաջարկելով.

1. Օրենսդրական փոփոխություն կատարել, հստակ սահմանելով և տարբերակելով «փորձագետի եզրակացություն» և «փորձագետի կարծիք» տերմինները, նշելով, թե ինչ իրավական ուժ ունեն փորձագետի կարծիքն ու փորձագետի եզրակացությունը, թե ինչ չափանիշներով պետք է գնահատել վերոնշյալների հավաստիությունը, որոնց շնորհիվ դատարանը կամ քննիչը կգնահատեն այս ապացույցների հավաստիությունը:

Ողջամիտ ենք համարում «փորձագետի եզրակացություն»ը գերադասել «փորձագետի կարծիք» ապացույցի տեսակից՝ այդ կերպ խուսափելով նախաքննության ուղղությունը հետագայում ապակողմնորոշելու և այն չարաշահումների վերածելու ռիսկերից:

2. «Փորձագետի կարծիք»ը հեռացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ապացույցների տեսակների ցանկից՝ այս ապացույցի տեսակին տալով նվազ ապացուցողականություն ապացույցների գնահատման համակցմամբ:

3. Ապահովել գործիքակազմ և մեխանիզմներ, որոնք կապահովեն փորձագիտական եզրակացությունների արժանահավատությունն ու օգտագործված հետազոտական մեթոդիկայի ճշգրտությունը, ինչպես նաև նախատեսել «փորձագետի կարծիք»ի հիմնավորվածության չափորոշիչներ և հիմնավորվածության վերաբերյալ կարծիքի տոկոսային շեմ:

Այս առաջարկությունների ընդունումը կնպաստի իրավական ակտերում մասնագիտական եզրակացությունների ինստիտուտի հիմքի ամրապնդմանը և կբարձրացնի իրավական որոշումների կայացման գործընթացի ինստիտուցիոնալացումը, և բացի այդ, հիմնավորված մեխանիզմ նախատեսելով, «փորձագետի կարծիք»ն ապահովված կլինի չարաշահումներից, փորձագետի նկատմամբ անաչառության ռադիկալ սուբյեկտիվիզմի դրսևորումներից:

Ներկայացված վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ առաջարկությունների իրականացումը կնպաստի ՀՀ իրավական համակարգի արդիականացմանը, նախաքննության արդյունավետությանը, և իրավունքի չարաշահումներով պայմանավորված ռիսկերի նվազեցմանն ու արդար դատաքննությանը:

Գրականության ցանկ

1. Լևոն Օհանյան, Կրիմինալիստիկա, 2010, 2-րդ հրատարակչություն:
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրք (ՀՕ-248):
3. Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք՝ (<https://www.e-draft.am/>).
4. Ինգա Ավագյան, Փորձագետի եզրակացությունը՝ որպես ապացույց ՀՀ քրեական դատավարությունում: Դատական իշխանություն / Judicial Power. (2023). 152-169:
5. Ենգիբարյան Վ., Քրեական դատավարություն և կրիմինալիստիկա, 2019թ.:
6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրք (ՀՕ-306-Ն):
7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանական գործնական ուղեցույց:
8. Треушников М.К., Судебные доказательства, 2004 г.
9. Daubert V., Merrell Dow Pharmaceuticals, Inc. 509 U.S. 579, 1993г.
10. Уголовно-процессуальный кодекс Украины.
11. Уголовно-процессуальный кодекс Российской Федерации.
12. Федеральный конституционный закон «О Судебной системе Российской Федерации».
13. Уголовно-процессуальный кодекс Грузии, Консолидированная версия (07.12.2024-20.11.2024).
14. Code de procédure pénale, France (version consolidée au 13 août 2025).

“EXPERT OPINION” AND “EXPERT CONCLUSION” AS TYPES OF EVIDENCE: ISSUES OF LAW ENFORCEMENT IN THE CRIMINAL PROCEEDINGS OF THE REPUBLIC OF ARMENIA

Frangyan V.

This article is devoted to a comprehensive study of the theoretical, legal, and practical aspects of the use of such types of evidence as the expert conclusion and the expert opinion in the criminal proceedings of the Republic of Armenia. Based on an analysis of the current criminal procedural legislation and law enforcement practice, the article examines the specific features of the legal regulation of these evidentiary instruments, their procedural nature, content, and significance within the evidentiary process.

Particular attention is paid to the issues of distinguishing between an expert conclusion and an expert opinion, determining their evidentiary status, and addressing the challenges of ensuring legal parity in their assessment and use during both the pre-trial investigation and court proceedings. The study explores procedural mechanisms for verifying, challenging, and evaluating expert findings, as well as the influence of such evidence on the formation of the internal conviction of participants in criminal proceedings and on the adoption of procedural decisions.

The paper identifies existing law enforcement problems arising from the ambiguous interpretation of certain legislative provisions governing the use of expert conclusions and expert opinions and substantiates the need for further improvement of the relevant procedural mechanisms. It concludes that ensuring a uniform approach to the evaluation of these types of evidence constitutes an important guarantee for the implementation of the principles of adversarial proceedings, equality of arms, and a fair trial.

The results of the study may be applied in law enforcement activities, forensic expert practice, and in the process of improving the criminal procedural legislation of the Republic of Armenia.

Keywords: expert conclusion, expert opinion, criminal proceedings, evidence, proof, evaluation of evidence, forensic expertise, adversarial proceedings, fair trial, criminal procedural law.

«ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТА» И «МНЕНИЕ ЭКСПЕРТА» КАК ВИДЫ ДОКАЗАТЕЛЬСТВ: ПРОБЛЕМЫ ПРАВОПРИМЕНЕНИЯ В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Франгян В. Р.

Статья посвящена комплексному исследованию теоретико-правовых и практических аспектов использования таких видов доказательств, как

«закключение эксперта» и «мнение эксперта», в уголовном судопроизводстве Республики Армения. На основе анализа действующего уголовно-процессуального законодательства и правоприменительной практики рассматриваются особенности правового регулирования указанных доказательственных средств, их процессуальная природа, содержание и значение в механизме доказывания.

Особое внимание уделяется вопросам разграничения заключения эксперта и мнения эксперта, определению их доказательственного статуса, а также проблемам обеспечения правового паритета при их оценке и использовании на стадиях предварительного расследования и судебного разбирательства. Исследуются процессуальные механизмы проверки, оспаривания и оценки экспертных выводов, а также влияние данных доказательств на формирование внутреннего убеждения участников уголовного процесса и принятие процессуальных решений.

В работе выявляются существующие проблемы правоприменения, связанные с неоднозначностью толкования отдельных законодательных положений, регулирующих использование заключения и мнения эксперта и обосновывается необходимость дальнейшего совершенствования соответствующих процессуальных механизмов. Сделан вывод о том, что обеспечение единообразного подхода к оценке данных видов доказательств является важной гарантией реализации принципов состязательности, равноправия сторон и справедливого судебного разбирательства.

Результаты исследования могут быть использованы в правоприменительной деятельности, судебно-экспертной практике, а также в процессе совершенствования уголовно-процессуального законодательства Республики Армения.

Ключевые слова: заключение эксперта, мнение эксперта, уголовное судопроизводство, доказательства, доказывание, оценка доказательств, судебная экспертиза, состязательность сторон, справедливое судебное разбирательство, уголовно-процессуальное право.

Ներկայացվել է խմբագրության՝ 13.02.2026

Ընդունվել է տպագրության՝ 29.05.2026